

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2019 թ. հոկտեմբերի 11-ին կայացած թիվ 2 նիստի

Գիտական խորհրդի 41 անդամներից նիստին ներկա էին 32-ը:

Օրակարգում՝

1.ԵՊՀ հիմնադրման 100 ամյակի շրջանակներում աշխատակիցների պարգևատրում:

2.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ դեկան Է.Ս. Գևորգյանի հաղորդումը Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-րդ տարեդարձի կապակցությամբ մի շարք աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ: Նա նշեց, որ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արմեն Թոչունյանին շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում, կենսաբանության ֆակուլտետի 8 աշխատակիցներ պարգևատրվել են ոսկե և արծաթե մեդալներով: Շարունակելով իր խոսքը նա ասաց, որ բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար բոլորն են արժանի բարձր պարգևների, սակայն թույլ տվեք ներկայացնել այն 37 աշխատակիցների անունները, որոնք արժանացել են պատվոգրերի (30) և հուշադրամների (7):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ. Վարդևանյանը: Նա նշեց, որ ողջունելի է այն փաստը, որ ԵՊՀ դեկավարությունը և կենսաբանության ֆակուլտետի դեկանը հաշվի առնելով աշխատակիցների ակտիվ մասնակցությունը գիտամանկավարժական և հասարակական աշխատանքներին արժանացրել են նման պարգևների:

Տեղի ունեցավ պարգևատրման հանդիսավոր արարողություն:

Նիստի ժամանակ քննարկվեցին մի շարք ընթացիկ հարցեր: Ելույթ ունեցան դեկան Է.Ս. Գևորգյանը և Գիտական խորհրդի անդամներ:

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար կենսաբանության ֆակուլտետից թեկնածուների առաջադրման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ «Լավագույն ուսանող 2019» մրցանակաբաշխությանը կենսաբանության ֆակուլտետից առաջարկել 2 ուսանողի թեկնածություններ:

«Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա» մագիստրոսական կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Սպարտակի Համբարձումյան;

«Կիրառական մանրէաբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանողուհի Լիանա Մանվելի Վանյան:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ **Անահիտ Վարդանի Մամիկոնյանի** ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ «ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2018» ֆինասավորմամբ «18A-1f42» ծածկագրով՝ «Արգինազը կրծքագեղձի քաղցկեղի և շաքարախտով խթանված սիրտ-անոթային հիվանդությունների բուժման ցուցանիշ» թեմայի ամփոփիչ հաշվետվության հարցը:

ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հայտարարած «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2018» մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած ասպիրանտ **Հասմիկ Նորիկի Եգորյանի** «Առնետների լյարդի մորֆոֆունկցիոնալ առանձնահատկությունների փոփոխությունները միկոտոքսինների ազդեցության պայմաններում» թեմայի ամփոփիչ հաշվետվության հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Վերոհիշյալ թեմաների օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները համարել ավարտված:

ԼՍԵՑԻՆ՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Ն. Վ. Ավթանդիլյանի ՀՀ Պետական Բյուջեից Գիտական և Գիտատեխնիկական Գործունեության Պայմանագրային (Թեմատիկ) Ֆինանսավորմամբ՝ 18T-1F267 ծածկագրով «Կրծքագեղձի հակաքաղցկեղային նոր թերապևտիկ մոտեցումներ հայկական դեղաբույսերի լուծամզվածքների կիրառմամբ՝ համակցված Լ-արգինին/պոլիամին/ազոտիօքսիդ ուղղու արգելակիչներով» թեմայի ընթացիկ հաշվետվության հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ թեմայի հետագա ֆինանսավորումը:

ԼՍԵՑԻՆ՝ Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Վահագն Սմբաթի Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՑԹ ՈՒՆԵՑԱՎ՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Գ. Նանագյուլյանը:


ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Վահագն Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «ՀՀ-ում տարածված դեղաբանական նշանակություն ունեցող որոշ մակրոմիցետների կենսաբանական ակտիվ նյութերի գնահատում», Գ.00.05 «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ,

2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ, պրոֆ. Ս.Գ. Նանագյուլյանին:

Գիտական խորհրդի նախագահ,

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է. Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար,

դոցենտ



Ի.Վ. Շահազիզյան